



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ

21/հուլիսի/2025 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու⁸ անդամներ:

Բացակա էին՝

Ս. Գևորգյան, Չ. Դավթյան, Գ. Խաչատրյան,
Ս. Մկրտչյան, Ա. Հովսեփյան, Ս. Համբարյան:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Կարեն Գևորգյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտես - սագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը, պայմանագրային աշխատակից (ճարտարապետ) Նարեկ Գրիգորյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քառուղար Գոհար Թադևոսյանը

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2025 թվականի հուլիսի 21-ի արտահերթ նիստի հետևյալ *օրակարգը՝*

1.1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Մանկական Զարգացման Հիմնադրամին տրամադրված շինության անհատույց օգտագործման իրավունքի ժամկետը երկարաձգելու և նոր պայմանագիր կնքելու համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ համայնքի 2025 թվականի հողային հաշվեկշիռն համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Ջերմուկ քաղաքում ավտոկայանատեղի կազմակերպելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ քաղաքի քաղաքային այգու տարածքի ընդհանուր օգտագործման հողամասերից չափազրմամբ առանձնացված հողակտորները օգտագործման տրամադրելու և տրամադրված իրավունքի պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.6. Ջերմուկ քաղաքի արհեստական լճակների ջրային մակերևույթը օգտագործման տրամադրելու, օգտագործման ժամկետը, վճարի չափը և պայմանները սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է նտնում ստորագրման պահից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-ին հոդվածին համապատասխան

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Զերմուկ համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են արդեն միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող ՀՀ օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----7 Դեմ-----0 Ձեռնպահ-----1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Լ/:

ԼՍԵՑԻՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Մանկական Զարգացման Հիմնադրամին «Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տրամադրված Զերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 27/7 հասցեում գտնվող շինությունն անհատույց օգտագործելու իրավունքի ժամկետը երկարաձգել՝ Հիմնադրամի «Զարման» կենտրոնի վերահավաստագրման անհրաժեշտությամբ պայմանավորված կնքելով նշված հասցեում գտնվող շինության անհատույց օգտագործման իրավունքի տրամադրման նոր պայմանագիր:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության օգտագործման իրավունքի ժամկետը սահմանել 5 (հինգ) տարի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «Զարման» կենտրոնի վերահսկվաստագրման օրվանից սկսած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը օրվանից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 55-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝

1. Համաձայնություն տալ 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Ջերմուկ համայնքի հողային հաշվեկշիռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----7----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----1-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 56-Լ/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի և վարչական վարույթի առանձնահատկությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

1. Ջերմուկ քաղաքի Վ. Սարոյան փողոցից դեպի ջրվեժ գնացող ճանապարհի աջակողմյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման բաց հարթակում (փողոցի մաս) կազմակերպել ավտոկայանատեղի՝ դրա սահմանները համապատասխան գծանշումներով կամ երթևեկության

կազմակերպման այլ տեխնիկական միջոցներով առանձնացնելով երթևեկելի մասից և կանոնակարգել դեպի կայանատեղ մուտքի ու ելքի հատվածները:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ավտոկայանատեղի կազմակերպիչը համայնքի ղեկավարն է:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը կայանելու համար գանձվող տեղական վճարի դրույքաչափերը հաստատվել են Ջերմուկ համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր և տեղական վճարների արտոնություններ սահմանելու մասին» N 76-Ն որոշմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Ներքին գործերի նախարարության Ոստիկանության համայնքային ոստիկանության կողմից տրված համաձայնությունը ստանալու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 57-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՅԳՈՒ ՏԱՐԱԾՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՉԱՓԱԳՐՄԱՄԲ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱԿՏՈՐՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ձեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ, 48¹-րդ, 76-րդ և 81-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշման VIII բաժնի դրույթները՝

1. Ջերմուկ քաղաքի քաղաքային այգու տարածքի ընդհանուր օգտագործման հողամասերից չափագրմամբ առանձնացված հողակտորները (այսուհետ՝ հողամաս) տրամադրել օգտագործման կառուցապատման կամ վարձակալության իրավունքով՝ առանց գույքային միավոր բաժանման՝ որակավորում ունեցող չափագրողի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծին համապատասխան:

2. Սահմանել, որ հողամասը կառուցապատման կամ վարձակալության իրավունքով օգտագործման է տրամադրվում՝

ա/ մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, ընդ որում՝ մինչև 20 քառ. մետր մակերեսով կրակների, առևտրի և սպասարկման այլ օբյեկտների համար կառուցապատման իրավունքը տրամադրվում է առանց մրցույթի,

բ/ մինչև 5 (հինգ) տարի ժամկետով, հողամասերի նշանակությանը համապատասխան շահագործելու և բնակչությանը ծառայություններ մատուցելու նպատակով:

3. Հողամասերը կառուցապատման իրավունքով առանց մրցույթի տրամադրման դեպքում վճարի չափ սահմանել ամսական 1000 (հազար) դրամ՝ 1 քմ-ի համար՝ ամառային ամիսների համար, և ամսական 500 (հինգ հարյուր) դրամ՝ տարվա մյուս ամիսների համար՝ անկախ գործունեության ծավալումից, իսկ մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով տրամադրման դեպքում վարձավճարի (վճարի) մեկնարկային չափը սահմանել 1000 (հազար) դրամ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----- 8 ----- Դեմ----- 0 ----- Ձեռնպահ----- 0 -----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58-Ա/

ԼՍԵՑԻՆ

**ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼՃԱԿՆԵՐԻ ՋՐԱՅԻՆ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Ձեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող արհեստական լճակների ջրային մակերևույթը (այսուհետ՝ լճակներ) տրամադրել օգտագործման՝ ժամանցային բնույթի ծառայությունների (նավակների վարձույթ, լաստ-սրճարան և այլն) կազմակերպման նպատակով:

2. Լճակների օգտագործման ժամկետ սահմանել յուրաքանչյուր տարվա հունիս, հուլիս և օգոստոս ամիսները (երեք ամիս)՝ տնտեսվարող սուբյեկտի կողմից այն, ըստ անհրաժեշտության, երկարաձգելու իրավունքով:

3. Լճակների օգտագործման վճարի չափը սահմանել 70000 (յոթանասուն հազար) դրամ՝ գործունեության յուրաքանչյուր ամսվա համար:








4. Իրավունք վերապահել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝ կնքելու լճակների օգտագործման պայմանագիր՝ ղեկավարվելով համայնքի լավագույն շահից և շրջակա միջավայրի պահպանության կարևորությունից բխող սկզբունքներով:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-----8----- Դեմ-----0----- Ձեռնպահ-----0-----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	բացակա
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	բացակա
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	
Գևորգյան Մանան Աղվանի	բացակա
Վահանյան Վարուժան Կնյազի	
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Նիստին արձանագրեց՝ Գոհար Թադևոսյան

